ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ՝ ԻՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

06.08.2018 14:43

Վերջին շրջանում զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հարթակներում հաճախակի են դարձել դեպքերը, երբ մասնագիտական աշխատանք կատարող փաստաբանը նույնացվում է իր վստահորդի հետ: Փաստաբանների նկատմամբ վերաբերմունքը հիմնականում պայմանավորված է նրանց վստահորդների անձով ու այդ անձանց վերաբերյալ հանրության բացասական ընկալումներով:

Բազմաթիվ են փաստաբանների պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու նպատակ հետապնդող, նույնիսկ սպառնալիք պարունակող մեկնաբանությունները:

ՀՀ փաստաբանների պալատը նախկինում անդրադարձել էր որոշ քրեական գործերի առնչությամբ փաստաբանության ինստիտուտի թիրախավորման խնդրին՝ կոչ անելով հարգել փաստաբանի մասնագիտական աշխատանքը և չնույնացնել փաստաբանին իր վստահորդի հետ:

Նշված խնդրին **անդրադարձել էր նաև Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը**՝ ընդգծելով հասարակությունում փաստաբանի աշխատանքի վերաբերյալ իրավական ճիշտ մշակույթի ու ընկալումների արմատավորման կարևորությունը:

Չնայած այս կոչերին և հորդորներին, շարունակվում է հնչեցվել փաստաբանների պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող արտահայտություններ: Այս միտումը վտանգավոր է և խոչընդոտ է հանդիսանում փաստաբանության ամրապնդման գործընթացում: Հարկ է նկատել, որ վիրավորանքի հրապարակային դրսևորումներն ունեն աճի միտում, ինչը պայմանավորված է նշված դեպքերի կանխարգելման և իրավական հետապնդման արդյունավետ միջոցների բացակայությամբ: Գործող օրենսդրությամբ քրեորեն արգելված արարք է հանդիսանում միայն փաստաբանին սպառնալը, մինչդեռ փաստաբանին հրապարակային հարթակներում վիրավորելը (հայհոյելը) իր վտանգավորությամբ չի զիջում նախորդ արարքին, քանի որ նույն կերպ խախտում է որևէ անձի կողմից փաստաբանական գործունեությանը չմիջամտելու երաշխիքը («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված):

Միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունը արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը, մասնագիտական անկախությունը և անկաշկանդ գործելու ազատությունը պաշտպանելու համար: Այս տեսանկյունից, փաստաբանին վիրավորելու վարքագծի քրեաիրավական կանխարգելումն ու հետապնդումը կարող է հանդիսանալ առավել արդյունավետ գործիք:

Նկատի ունենալով վերոգրյալը, մասնավորապես՝ փաստաբանի նկատմամբ վիրավորանքի հրապարակային դրսևորումների աճը, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը կներկայացվի՝ ***փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելու արարքի քրեականացման նպատակով***՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկություն ներկայացնելու հարցը:

Հ.Գ. *Հաշվի առնելով գործադիր իշխանության նկատմամբ հանրային բարձր վստահությունը, ակնկալում ենք գործող իշխանության հրապարակային դիրքորոշումը՝ փաստաբաններին վիրավորելու խնդրի վերաբերյալ:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

Առաջարկվող նորություններ

07.08.2018ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԻՐԱՎՈՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14.08.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՁՐՊԱՐՏԵԼՈՒ ԱՐԱՐՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

14.08.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԵՎ ՁՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆԵԼ ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳՈՎ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })